

Եւ այլ օր եկաք Հրեշտակապետ
վանքն, որ էր կամարակապ եւ վիճալէն,
չուրջանակի պարիսպ. եւ կայր ի նմա յիսուն—
155 վաթսուն տուն քարէ. եւ անդ եւս յոլով տնօ—
րինականք կ'անէին:

Եւ անտի ելեալ քաղքէն դուրս՝ մտաք
Սուրն Փրկիչ. մեծ եւ հռչակաւոր վանք,
պարսպաւոր, որ վաթսուն օտա ունէր՝ նոր
160 քարէ: Եւ կայր բազն ծառ մի թուրինճի աղ—
նիւ, յորմէ բախեց ամենայնի (⁶): Եւ այլ տե—
սաք Ձիթենի մի վաղուցու, բոլորն ցանկով
պատած. եւ ասին թէ ի այս ծառս կապած
էր Յիսուս եւ չարչարած. եւ ունէր սակաւ
165 պտուղ, ուստի հատաք:

Եւ այս մեծամեծ ըխտատեղիքս ամէն տեղ
ժամուց պիտի տալ մարդու կօրա՝ ուրօպ,
փարա, դուռուչ եւ ոսկի:

ՁԻԹԵՆԵԱՅ ԼԵԱՌՆ

Եւ անտի ելաք Ձիթենեաց լեռան,
170 ուստի համբարձաւ Տէրն մեր. որ է մեծ եկե—
ղեցի բարձր լեռան վրայ պարսպով. եւ բոլորն
ԺԲ մատուռ՝ Յարութեան նման՝ ԺԲ ազգի.
եւ մտեալ ի ներս սէսաք զմտնատեղս Յիսուսի.
աղօթեցաք անդ, մեղաց թողութիւն խնդրե—
175 ցաք մեզ եւ մեր ծնողաց. բայց այժմ Տաճիկք
առել են:

Անտի գնացեալ կարգաւ զամենայն ուխ—
տատեղս՝ եկաք Յարութեան բոլորն չրջեցաք:

158 Հրչակաւոր: — 160 փակն... թուրինճի: —
166 ըղխտատեղիքս: